ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/62

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Բողոքաբեր՝ «Պստո» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Պստո» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի

Գնման Մրցույթի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով բաց մրցույթ, թուջե արգելափակոցների ձեռքբերում և տեղադրում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Պստո» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 06.05.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

- վերացնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով Մրցույթի գնահատող հանձնաժողովի 20.04.2020թ.-ի թիվ 4 արձանագրությամբ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ին 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,

- պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով Մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ի կողմից 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված հայտը համարել հրավերի պահանջներին անհամապատասխան, գնահատել անբավարար և մերժել,

- պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով Մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Պստո» ՍՊԸ-ին 38 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկով:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 30.04.2020թ.-ին:

05.05.2020թ.-ին այն վերադարձվել է՝ բողոքում առկա խախտումները վերացնելու համար:

Բողոքը կրկին՝ վերադարձնելուց հետո Բողոքներ քննող անձին է մակագրվել 06.05.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/45 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

22.05.2020թ.-ին և 05.06.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 22.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.06.2020թ.-ին:

2. «Պստո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Պստո» ՍՊԸ-ն 06.05.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) 28.02.2020 թվականին հայտարարել է թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնման Մրցույթ (այսուհետ նաև Մրցույթ), իր կարիքների համար՝ «թուջե արգելափակոցների ձեռքբերում և տեղադրում» ձեռքբերման նպատակով, երկու չափաբաժնով: Հիմք՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ «թուջե արգելափակոցների ձեռքբերում և

տեղադրում» ձեռքբերման նպատակով թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով բաց մրցույթի 28.02.2020 թվականի հայտարարությունը:

1.2.Մրցույթի գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտերի բացման և գնահատման 09.04.2020 թվականի նիստում նշել է, որ մասնակիցների կողմից ներկայացված յուրաքանչյուր բացված հայտում պահանջվող փաստաթղթերը առկա են: Սակայն մասնակիցների ներկայացրած որոշ անհամապատասխանությունների հիմքով որոշեց կասեցնել հայտերի բացման և գնահատման նիստը մասնակիցներին հնարավորություն տալով շտկել առկա անհամապատասխանությունները: Հիմք՝ Հանձնաժողովի 09.04.2020 թվականի թիվ 2 արձանագրություն:

1.3.13.04.2020 թվականի հրավիրված նիստում Հանձնաժողովը արձանագրելով մասնակիցների կողմից անհամապատասխանությունների շտկման փաստը, որոշեց 20.04.2020 թվականին հրավիրել միաժամանակյա բանակցություններ: Հիմք՝ Հանձնաժողովի 13.04.2020 թվականի թիվ 3 արձանագրություն:

1.4. 20.04.2020 թվականին հրավիրված միաժամանակյա բանակցությունների արդյունքում 1-ին չափաբաժնի մասով գները չեն նվազեցվել: 2-րդ չափաբաժնի մասով գների նվազեցում է կատարվել միայն «ՊՍՏՈ» ՍՊ ընկերության և «ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ» ԱԿ կողմից: Հիմք՝ Հանձնաժողովի 20.04.2020 թվականի թիվ 4 արձանագրություն:

1.5.«ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ» ԱԿ կողմից միաժամանակյա բանակցությունների ընթացքում կատարված գնային առաջարկի արդյունքում կատարվել է ինքնարժեքի նվազեցում 2-րդ չափաբաժնի մասով՝ 34.4 միլ. ՀՀ դրամի փոխարեն առաջարկելով 31.5 մլն. ՀՀ դրամ: Հիմք՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը և «ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ» ԱԿ կողմից 07.04.2020 թվականին ներկայացված գնային առաջարկը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Նույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: (…):

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5-ի ա ենթակետի համաձայն՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները): Նույն կետի 5-ի զ ենթակետի համաձայն՝ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ՝

- միևնույն գնման առարկայի բնութագրերով տվյալ օրացուցային տարում արդեն իսկ կազմակերպվել է առնվազն մեկ գնման մրցակցային Մրցույթ, որը չկայացած է հայտարարվել մասնակիցների ներկայացրած գները գնման հայտով սահմանված գինը գերազանցելու հիմքով պայմանավորված.

- ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության

համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող երեսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Մրցույթի հրավեր 5.1. կետի համաձայն՝ առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, փուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել հետևյալը, որ մասնակիցների կողմից նույն Մրցույթի շրջանակում չի կարող ներկայացնել մեկից ավելի հայտ, իսկ հայտում պետք է ներառվի նաև մասնակցի հաստատած գնային հայտը: Մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները պարտադիր պետք է ներկայացվեն ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Այն դեպքերում երբ հրավիրվում են բանակցություններ մասնակիցները կարող են կատարել գնային առաջարկների նվազեցում, սակայն ոչ պակաս ներկայացված ինքնարժեքից, հակառակ դեպքում հայտ գնահատվում է հրավերի պայմաններին անհամապատասխան՝ անբավարար և մերժվում է:

Սույն դեպքում Պատվիրատուի կողմից 20.04.2020 թվականին հրավիրված բանակցությունների արդյունքում մասնակիցներից «ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ» ԱԿ իր կողմից 07.04.2020 թվականին ներկայացրած գնային առաջարկը Մրցույթի 2-րդ չափաբաժնի մասով նվազեցվել է ինքնարժեքից, որը նշված է եղել 34.4 մլն. ՀՀ դրամ սակայն նվազեցման արդյունքում այն փոփոխվել և առաջարկվել է 31.5 մլն. ՀՀ դրամ, արդյունքում փաստացի կատարելով ինքնարժեքի նվազեցում: Սույն դեպքում Հանձնաժողովի կողմից պետք է կայացվեր՝ «ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ» ԱԿ կողմից ներկայացված հայտը հրավերի պայմաններին անհամապատասխան գնահատելու որոշում և մերժվեր, որի արդյունքում Մրցույթի 2-րդ չափաբաժնի մասով հաղթող կճանաչվեր «ՊՍՏՈ» ՍՊ ընկերությունը 38.0 մլն ՀՀ դրամ գնային առաջարկով: Հանձնաժողովի վերոհիշյալ ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում խախտվել են «ՊՍՏՈ» ՍՊ ընկերության շահերը, ոտնահարելով Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքները:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Պստո» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

- վերացնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով Մրցույթի գնահատող հանձնաժողովի 20.04.2020թ.-ի թիվ 4 արձանագրությամբ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ին 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,

- պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով Մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ի կողմից 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված հայտը համարել հրավերի պահանջներին անհամապատասխան, գնահատել անբավարար և մերժել,

- պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով Մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Պստո» ՍՊԸ-ին 38 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկով:

Ի լրումն 06.05.2020թ.-ին ներկայացված բողոքի, Ընկերությունը 11.05.2020թ.-ին ներկայացրել է բողոքի լրացում՝ հայտնելով հետևյալը.

«Թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/62 Մրցույթի շրջանակում քննության է առնված թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնման Մրցույթի վերաբերյալ «ՊՍՏՈ» ՍՊ ընկերության բողոքը: Բողոքի պահանջներից է նաև «պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով Մրցույթի հանձնաժողովին՝ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «ՊՍՏՈ» ՍՊ ընկերությանը 38.0 մլն ՀՀ դրամ գնային առաջարկով», նշված պահանջը ներկայացնելուց տեղի է ունեցել վրիպակ և «ՊՍՏՈ» ՍՊ ընկերության հայտի գնահատման գնային առաջարկ 42.0 մլն. ՀՀ դրամի փոխարեն նշվել է 38.0 մլն ՀՀ դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից 20.04.2020 թվականին հրավիրված բանակցությունների արդյունքում մասնակիցներից «ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ» ԱԿ իր կողմից 07.04.2020 թվականին ներկայացրած գնային առաջարկը Մրցույթի 2-րդ չափաբաժնի մասով նվազեցվել է ինքնարժեքից, որը նշված է եղել 34.4 մլն. ՀՀ դրամ սակայն նվազեցման արդյունքում այն փոփոխվել և առաջարկվել է 31.5 մլն. ՀՀ դրամ, արդյունքում փաստացի կատարելով ինքնարժեքի նվազեցում, ապա տվյալ դեպքում Հանձնաժողովի կողմից պետք է կայացվեր՝ «ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ» ԱԿ կողմից ներկայացված հայտը հրավերի պայմաններին անհամապատասխան գնահատելու որոշում և մերժվեր, որի արդյունքում Մրցույթի 2-րդ չափաբաժնի մասով հաղթող կճանաչվեր «ՊՍՏՈ» ՍՊ ընկերությունը իր ներկայացրած 42.0 մլն ՀՀ դրամ գնային առաջարկով, քանզի բանակցության արդյունքում հաջորդ գնային նվազեցում, որդեն տեղի է ունեցել Հանձնաժողովի վերոհիշյալ ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում, որին ի հակառակ պետք է դադարեցվեր բանակացությունները:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Պստո» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ բողոքում ներկայացված երրորդ պահանջը կարդալ հետևյալ խմբագրությամբ «պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով Մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Պստո» ՍՊԸ-ին 42 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկով:

Ընկերությունը 14.05.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/62 Մրցույթի շրջանակում 13.05.2020 թվականին ներկայացված թիվ 20/43845 գրությամբ հայտնել է հետևյալ էական նշանակություն ունեցող հանգամանքները: Պատվիրատուն հայտնել է հետևյալը, որ.

Բանակցությունների հիմնական նպատակն է մասնակիցների կողմից այնպիսի գնային առաջարկի ներկայացումը, որը սակարկությունների ընթացքում կճանաչվի ամենացածր գնային առաջարկը՝ այսինքն օրենսդրությամբ չի տարանջատվում ընդհանուր բաղադրիչներից, որը կարող է նվազեցվել, որը ոչ:

Նշված պնդումը առնվազն տարակուսելի է Գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Մրցույթի հրավեր 5.1. կետի համաձայն՝ առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Նշված իրավական նորմերի և հրավերի պահանջների համապարփակ վերլուծությունից ակնհայտ է, որ առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, ուստի սույն հանգամանքը հաշվի առնելով պետք է արձանագրել, որ ապրանքի գնի արժեքի նվազեցում ինքնարժեքից հնարավոր չէ,

այն կարող է նվազեցվել միայն շահույթից: Ի դեպ խոսքը վերաբերվում է նաև բանակցությունների արդյունքում առաջարկված գնի նվազեցմանը, քանզի մասնակիցը կարող է ներկայացնել մեկ գնային առաջարկ և բանակցությունները ենթադրում են փոփոխություն հայտով ներկայացված գնային առաջարկում, այլ ոչ թե նոր գնային առաջարկի ներկայացում:

Երևանի քաղաքապետարանը հայտնել է նաև, որ լիազոր մարմնի 24.12.2019 թվականի N_01/26-1/21412-2019 գրությամբ հայտնել է, թե իբր չի բացառում բանակցությունների արդյունքում ինքնարժեքի վերանայման հնարավորությունը:

Կրկին անհասկանալի մեկնաբանություն Պատվիրատուի կողմից, քանզի նշված գրությամբ, որը կցվել է լիազոր մարմինը նման դիրքորոշում չի հայտնել, ավելին հղում է կատարել Գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետին, մատնանշելով ինքնարժեքի նվազեցման անթույլատրելիությունը: Պատվիրատուն լիազոր մարմնի հայտնած դիրքորոշումը ամբողջությամբ հակառակ է հասկացել

Ուստի պայմանավորված վերոգրյալով գտնում եմ, որ Պատվիրատուի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/62 Մրցույթի շրջանակում 13.05.2020 թվականին թիվ 20/43845 գրությամբ ներկայացված դիրքորոշումն ակնհայտ անհիմն է և չի կարող դառանալ քննության առարկա:»:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 06.05.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6654-2020 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ հնարավորություն տալով «Պստո» ՍՊԸ-ի կողմից 06.05.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստին:

Երևանի քաղաքապետարանը 13.05.2020թ.-ին ներկայացված թիվ 20/43845 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Երևանի քաղաքապետին հասցեագրված Ձեր 06.05.2020 թվականի գրության՝ «ՊՍՏՈ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ բողոքաբեր) 06.05.2020 թվականին ներկայացրած բողոքի վերաբերյալ տեղեկացնում եմ հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կողմից թուջե արգելափակոցների ձեռքբերման և տեղադրման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնման Մրցույթի շրջանակում՝ հրավերի 8.6 կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի (այբուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցների հետ, առաջարկված գների նվազեցման նպատակով, վարվել են միաժամանակյա բանակցություններ, արդյունքում 2-րդ չափաբաժնի մասով «Նիկոլ Դուման» ԱԿ-ի կողմից գինը վերանայվել է, կազմելով 37800000 (երեսունյոթ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Բանակցությունների հիմնական նպատակն է մասնակիցների կողմից այնպիսի գնային առաջարկի ներկայացումը, որը սակարկությունների ընթացքում կճանաչվի ամենացածր գնային առաջարկ, այսինքն՝ օրենսդրությամբ չի տարանջատվում ընդհանուր բաղադրիչներից, որը կարող է նվազեցվել, որը ոչ:

Ավելին՝ Երևանի քաղաքապետարանը սույն խնդրի կարգավորման նպատակով 20.12.2019 թվականին թիվ 01/61-26996 գրությամբ (կից տրամադրվում է գրության պետճենը) դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն, որին ի պատասխան լիազորված մարմինը 24.12.2019 թվականի N_01/26-1/21412-2019 գրությամբ (կից տրամադրվում է գրության պետճենը) տեղեկացրել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ նշված օրենսդրությամբ սահմանված կարգով՝ նշելով «Գնումների մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, 34-րդ հոդվածի 3-րդ մասի և Կարգի 52-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները ըստ էության չբացառելով ինքնարժեքի վերանայման հնարավորությունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշում կայացնելով առաջնորդվել է ՀՀ ֆինանսների նախարարության վերը նշված գրությամբ:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/62 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից թուջե արգելափակոցների ձեռքբերման և տեղադրման նպատակով 28.02.2020թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել նաև «Նիկոլ դուման» Ա/Կ-ն և «Պստո» ՍՊԸ-ն:

«Նիկոլ դուման» Ա/Կ-ն թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկով որպես առաջարկվող ապրանքի ինքնարժեք նշել է 34 400 000 ՀՀ դրամ գումար, ընդհանուր գին՝ 46 200 000 ՀՀ դրամ, իսկ «Պստո» ՍՊԸ-ն որպես առաջարկվող ապրանքի ինքնարժեք նշել է 23 100 000 ՀՀ դրամ գումար, ընդհանուր գին՝ 49 618 800 ՀՀ դրամ:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.04.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը, որոշել է գնման ընթացակարգը կասեցնել և ընտրված մասնակցին որոշելու նպատակով բավարար հայտ ներկայացրած մասնակիցներին հրավիրել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա 20.04.2020թ.-ին ժամը 15:00-ին:

Հանձնաժողովի 20.04.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնման ընթացակարգի գների նվազեցման շուրջ հրավիրված միաժամանակյա բանակցությունների ներկայացել են «Ունիվերսալ» ՍՊԸ-ի, «Նիկոլ Դուման» Ա/Կ-ի և «Պստո» ՍՊԸ-ի տնօրենները ներկայացնելով անձը հաստատող փաստաթղթեր: Բանակցությունների արդյունքում 2-րդ չափաբաժնի մասով «Ունիվերսալ» ՍՊԸ-ի կողմից գինը չի նվազեցվել, «Պստո» ՍՊԸ-ի կողմից գնի վերջնական նվազեցումը կազմել է՝ 38 000 000 (երեսունութ միլիոն) ՀՀ դրամ, իսկ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ի կողմից գնի վերջնական նվազեցումը կազմել է՝ 37 800 000 (երեսունյոթ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ (ինքնարժեք+շահույթ+ԱԱՀ):

Նույն արձանագրության համաձայն՝ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ն 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

21.04.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Նույն հայտարարության համաձայն՝ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 31 500 000 ՀՀ դրամ, իսկ «Պստո» ՍՊԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 31 666 700 ՀՀ դրամ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Պստո» ՍՊԸ-ի կողմից 06.05.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակի, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում

է նաև, որ Ընկերությունը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե Ընկերությունը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընկերությունների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ Ընկերությունը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանել է գնային առաջարկի ներկայացման համար վավերապայմաններ, որոնցով սահմանվել են, որ այն պետք է բաղկացած լինի ինքնարժեքի, շահույթի և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից և միևնույն ժամանակ ներկայացված գնային առաջարկը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, որի վերաբերյալ տեղեկատվություն է պարունակում նաև հրավերը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կողմից թուջե արգելափակոցների ձեռքբերման և տեղադրման նպատակով 28.02.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի մասով հայտն ներկայացրած «Նիկոլ դուման» Ա/Կ-ն թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկով որպես առաջարկվող ապրանքի ինքնարժեք նշել է 34 400 000 ՀՀ դրամ գումար, ընդհանուր գին՝ 46 200 000 ՀՀ դրամ, իսկ «Պստո» ՍՊԸ-ն որպես առաջարկվող

ապրանքի ինքնարժեք նշել է 23 100 000 ՀՀ դրամ գումար, ընդհանուր գին՝ 49 618 800 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 20.04.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնման ընթացակարգի գների նվազեցման շուրջ հրավիրված միաժամանակյա բանակցությունների ներկայացել են «Ունիվերսալ» ՍՊԸ-ի, «Նիկոլ Դուման» Ա/Կ-ի և «Պստո» ՍՊԸ-ի տնօրենները ներկայացնելով անձը հաստատող փաստաթղթեր: Բանակցությունների արդյունքում 2-րդ չափաբաժնի մասով «Ունիվերսալ» ՍՊԸ-ի կողմից գինը չի նվազեցվել, «Պստո» ՍՊԸ-ի կողմից գնի վերջնական նվազեցումը կազմել է՝ 38 000 000 (երեսունութ միլիոն) ՀՀ դրամ, իսկ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ի կողմից գնի վերջնական նվազեցումը կազմել է՝ 37 800 000 (երեսունյոթ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ (ինքնարժեք+շահույթ+ԱԱՀ):

Նույն արձանագրության համաձայն՝ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ն 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

21.04.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի համաձայն՝ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 31 500 000 ՀՀ դրամ, իսկ «Պստո» ՍՊԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 31 666 700 ՀՀ դրամ:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը կազմել է 34 400 000 ՀՀ դրամ: Սակայն տեղի ունեցած բանակցությունների արդյունքում վերջինս իր ներկայացրած գնային առաջարկը նվազեցրել է ոչ միայն նույն գնային առաջարկով ներկայացրած շահույթից, այլ նաև՝ արդեն հստակ նախատեսված ինքնարժեքից, որի արդյունքում «Նիկոլ Դուման» Ա/Կ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 31 500 000 ՀՀ դրամ:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով Մրցույթի գնահատող հանձնաժողովը թույլ տալով Մասնակցին ներկայացնել ինքնարժեքից ցածր գնային առաջարկ, գործել է ոչ իրավաչափ, քանի որ բանակցությունների ժամանակ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավունք չունի նվազեցնելու գնային առաջարկով ներկայացված ինքնարժեքի գումարը, իսկ այդ փաստը Հանձնաժողովը բանակցությունների ժամանակ պետք է գնահատի որպես հրավերով նախատեսված

պայմաններին չհամապատասխանող և այդ հիմքով մերժի մասնակցի ներկայացրած հայտը:

Նման պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ խախտվում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով Ընկերությունների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ ցանկացած անձի՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը: Այն դեպքում, երբ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքով ներկայացված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով Մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ի կողմից 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված հայտը հրավերի պահանջներին անհամապատասխան համարելուն, անբավարար գնահատելուն և մերժելուն պարտավորեցնելու պահանջին, ապա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Մրցույթի գնահատող հանձնաժողովի 09.04.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է մրցույթի հրավերով սահմանված պահանջներին, ինչով պայմանավորված Հանձնաժողովը Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված կարգով հայտերի բացման և գնահատման նիստում բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին, այդ թվում նաև՝ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ին հրավիրել է բանակցությունների:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ի հայտը հրավերի պահանջներին անհամապատասխան համարելու, անբավարար

գնահատելու և մերժելու հիմքեր առկա չեն, քանի որ վերջինիս կողմից խախտում է արձանագրվել միայն բանակցային փուլում, հետևաբար «Նիկոլ Դուման» Ա/Կ-ի հայտը ենթակա է մերժման միայն բանակցային փուլում թույլ տրված խախտման համար, այլ ոչ՝ ամբողջ Մրցույթի:

Բողոքներ քննող անձն անդրադառնալով Ընկերության կողմից մեկ այլ՝ Մրցույթի 2-րդ չափաբաժնի մասով՝ «Պստո» ՍՊԸ-ին 42 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկով ընտրված մասնակից ճանաչելուն պարտավորեցնելու պահանջին, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովի կողմից, սույն որոշմամբ «որոշեց» մասում նշված պահանջը՝ 20.04.2020թ.-ի թիվ 4 արձանագրությամբ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ին 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու մասին որոշում կայացնելու արդյունքում, առաջանում է Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետում նշված դրույթները կիրառելու պարտականություն, որպիսի պայմաններում Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված՝ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելուն պարտավորեցնելու վերաբերյալ բողոքի պահանջը դառնում է առարկայազուրկ և ենթակա է մերժման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով Մրցույթի գնահատող հանձնաժողովը թույլ տալով «Նիկոլ Դուման» Ա/Կ-ին ներկայացնել ինքնարժեքից ցածր գնային առաջարկ՝ թույլ է տվել Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և Հրավերի 5.1-րդ կետերի խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Պստո» ՍՊԸ-ի կողմից 06.05.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/62 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 20.04.2020թ.-ի թիվ 4 արձանագրությամբ «Նիկոլ Դուման» Ա/Կ-ին 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Մնացած մասերով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ